# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԳՅՈՒՂԲՅՈՒՋԵՆԵՐԻ
## ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ
## ԳՅՈՒՂԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ
## Մ Ի Ջ Ո Ց Ո Վ
## ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

ԳՅՈՒՂՀՐԱՏ 1934 ԵՐԵՎԱՆ

20 FEB 2019

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԳՅՈՒՂԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԳՅՈՒՂԽՆԱՅ-ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐԽԻՎ

ԳՅՈՒՂՀՐԱՏ 1934 ԵՐԵՎԱՆ

ՀԱՄԱՐ
I-6824գր

Սրբագրիչ՝ Խ. Այվազյան
Հանձնված է արտադրության 1934 թ. ապրիլի 9-ին, ստորագրված է տպագրության 1934 թ. ապրիլի 19-ին:
Գլավլիտ № 196, Պատվեր № 209: Տիրաժ 1000

ԳՅՈՒՂՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՓՈՂ., 50

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԽՍՀՄ-ի Ֆ. Ժ. Կ. Տեղակալ՝ ԳԵՆԿԻՆ
«28» հուլիսի 1933 թ.

# I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Գյուղբյուջեների դրամարկղային սպասարկման տեսակները՝

1. Խնայդրամարկղները գյուղխորհուրդների դրամարկղային սպասարկումը կատարում են՝

ա. լրիվ՝ այսինքն յերբ խնայդրամարկղներն ընդունում են գյուղբյուջեյին պատկանող բոլոր տեսակի յեկամուտները և գյուղխորհուրդների տրամադրության տակ մուծվող գումարները, ինչպես նաև այդ գումարների հաշվին կատարում են բոլոր տեսակի վճարումները.

բ. մասնակի՝ յերբ խնայդրամարկղներն ընդունում են բացառապես գյուղխորհուրդներից, կամ մուտք են կատարում նրա տրամադրության տակ պետբանկի հանձնարարությամբ և դրամային վճարումները կատարվում են այդ գումարների հաշվից:

Առաջին դեպքում գյուղխորհուրդը հատուկ դրամարկղային ապարատ չի ունենում և դրամական բոլոր գործառնությունները կատարում է խնայդրամարկղի միջոցով:

Յերկրորդ դեպքում (մասնակի դրամարկղային սպասարկման)—գյուղխորհուրդը պահպանում է իր դրամարկղային ապարատը՝ հարկատուներից անմիջականորեն գումարներն ընդունելու համար:

Այդ դեպքում վերադաս տեղական և պետական բյուջեներին պատկանող գումարները գյուղխորհուրդն անմիջականորեն տեղափոխում է շրջանային պետբանկի բաժանմունքին, առանց մուծելու խնայդրամարկղի վորևէ ընթացիկ հաշվում։ Այդ գումարների փոխադրումը գյուղխորհուրդը կատարում է կամ փոստի, կամ հատուկ մարդու, կամ ֆելդ կապի միջոցով, պետբանկի բաժանմունքին։

Փոխադրելու կարգը և ժամկետները սահմանում են շրջ. (քաղ.) ֆինբաժինները, շրջպետբանկի բաժանմունքի հետ միասին։

Մնացած, այսինքն գյուղբյուջեյին պատկանող գումարները, գյուղխորհուրդն ամեն որ մուծում է խնայդրամարկղ, և ծախքերը վորպես կանոն կատարում է միայն խնայդրամարկղի միջոցով։

Առանձին դեպքերում գյուղխորհուրդն իրավասու յե անմիջականորեն ծախքեր կատարելու իր բյուջեյին պատկանող որվա յեկամտի գումարի սահմաններում։

## Վո՞ր խնայդրամարկղների վրա յե դրվում գյուղբյուջեների սպասարկումը:

2. Լրիվ դրամարկղային սպասարկումը դրվում է գյուղխորհրդի բնակավայրում գտնվող առնվազն մեկ հաստիքային աշխատակից ունեցող խնայդրամարկղի վրա։

Մասնակի սպասարկումը հանձնվում է գյուղխորհրդի բնակավայրում գտնվող հատուկ հաստիքային աշխատակից չունեցող խնայդրամարկղին։

Այն դեպքերում, յերբ գյուղխորհրդի բնակավայրում խնայդրամարկղ չկա, գյուղբյուջեյին պատկանող միջոցները պահվում են պետբանկի բաժանմունքում, կամ



մոտակա խնայդրամարկղում—վերջինը գործառնությունները կատարում է իրավական ավանդատուների ընթացիկ հաշվի սովորական կարգով։

3. Գյուղխորհուրդների միջոցները պահ տալու տեղը, պետբանկ կամ խնայդրամարկղ (յելնելով տեղական պայմաններից և հարմարություններից), վորոշում են շրջֆինբաժինները, շրջխնայդրամարկղի և պետբանկի բաժանմունքների փոխադարձ համաձայնությամբ։

Առանձին դեպքերում մեկ խնայդրամարկղի վրա կարելի յե դնել յերկու գյուղբյուջեների լրիվ սպասարկում, յեթե միայն խնայդրամարկղը մոտ է գտնվում գյուղխորհուրդներին և տարածությունը չի խանգարում ինչպես հարկատուների, նույնպես և գ. խ. նորմալ սպասարկմանը և յեթե խնայդրամարկղը ի վիճակի յե յերկու բյուջեների գործառնությունները կատարել առանձին-առանձին յուրաքանչյուր գյուղխորհրդի նկատմամբ։

## Խնայդրամարկղներին գյուղխորհուրդների դրամարկղային սպասարկումը հանձնելու կարգը:

4. Գյուղխորհուրդների լրիվ կամ մասնակի սպասարկման գործառնությունները հանձնվում են խնայդրամարկղներին, Միութենական Կ. Գ. Կ. և Ժ. Կ. Խ. 1933 թ. հուլիսի 17-ի վորոշման կարգով։ Այդպիսի դրամարկղների ցուցակը կազմում են միասին շրջ. (քաղ.) ֆինբաժինները, շրջ. (քաղ.) խնայդրամարկղները և պետբանկի շրջբաժանմունքը։ Ցուցակը հաստատվում է շրջգործկոմի (քաղխորհրդի) կողմից։

5. Գյուղբյուջեների լրիվ սպասարկման համար խնայդրամարկղներն ստանում են գյուղխորհուրդներից

փոխհատուցում $1{,}6\,^0/_0$-ի չափով հետևյալ գումարներից ա) այն բոլոր գումարներից, վորոնք մուծվում են գյուղխորհրդի ընթացիկ հաշվին (գյուղբյուջեյին պատկանող յեկամուտներ, ինքնահարկում և զանազան գումարներ—տես հոդ. 7) և բ) վերադաս տեղական և պետական բյուջեներին պատկանող հարկերի, տուրքերի և այլ յեկամուտների գումարներից, ինչպես նաև պետապահովագրության գումարներից—վորոնք փոխանցվում են պետբանկի շրջբաժանմունքները։

6. Փոխհատուցումը խնայդրամարկղներին վճարում են գյուղխորհուրդները համաձայն խնայդրամարկղի ներկայացրած տեղեկանքի, վոչ ուշ հաջորդ ամսի 10-ից։ Այն դեպքերում, յերբ հաշիվն ստանալուց 3 օր անց գյուղխորհուրդը չի կարգադրում իր հաշվից փոխհատուցման գումարը դուրս գրելու, խնայդրամարկղն իրավունք ունի համապատասխան ընթացիկ հաշվից դուրս գրելու անմիջականորեն։

Վերադաս տեղական և պետական բյուջեների գումարներից և Պետապի մուտքերից հասանելիք փոխհատուցումը պահում է շրջխնայդրամարկղը, այդ գումարները պետբանկի բաժանմունքը փոխանցելիս։ Պետբանկի հիմնարկները պարտավոր են ստուգելու պահած գումարների ճշտությունը։

## Գյուղխորհրդի անունով բացվելիք ընթացիկ հաշիվներ

7. Յուրաքանչյուր գյուղխորհրդի համար խնայդրամարկղը բաց է անում յերեք ընթացիկ հաշիվներ՝

ա. հաշիվ գյուղբյուջեյին պատկանող գումարների.

բ. հաշիվ ինքնահարկման գումարների և



գ. հաշիվ գյուղխորհրդի տրամադրության տակ մուծվող զանազան գումարների։

Այս հաշիվներից բացի, գյուղխորհուրդներին ուրիշ հաշիվներ բանալն արգելվում է։

8. Գյուղբյուջեյին պատկանող գումարների հաշվին գրանցվում են այդ բյուջեյին պատկանող բոլոր յեկամուտները, այն է՝

ա) հարկերը, տուրքերը և զանազան վոչհարկային յեկամուտները.

բ) վերադաս տեղական և պետական բյուջեների յեկամուտներից և պետապի գումարներից տվյալ գյուղբյուջեյի ոգտին հատկացված մասհանման գումարները.

գ) շրջանային կարգավորման ֆոնդից գյուղբյուջեյին փոխադրած ոժանդակությունը (դոտացիա)։

9. Ինքնահարկման գումարների հաշվում գրանցվում են միայն տվյալ գյուղխորհրդի քաղաքացիներից մուծվող ինքնահարկը։ Այլ գումարների գրանցում այս հաշվում, ինչպես նաև ինքնահարկման գումարների գրանցումն այլ հաշիվներում արգելվում է։

10. Գյուղխորհրդի տրամադրության տակ զանազան գումարների հաշվում գրանցվում են՝

ա) վերադաս տեղական կամ պետական բյուջեյից, նույնպես և զանազան կազմակերպությունների և հիմնարկների միջոցներից գյուղխորհրդի տրամադրության տակ հանձնվելիք նպատակային գումարները.

բ) գյուղխորհրդի տրամադրության տակ ժամանակավորապես մուծված և սահմանված ժամկետներին վերադարձման յենթակա գումարները և

գ) չպարզաբանված գումարները, մինչև նրանց պարզելու և ըստ նշանակության հանձնելու։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— «Գ» կետում հիշված գումարների պարզ նպատակը հայտնաբերելու պարտականությունն ընկնում է գյուղխորհրդի վրա։ Յեթե մի ամսվա ընթացքում գյուղխորհրդին այդ գումարները պարզելը չհաջողվի, գյուղխորհուրդը պետք է խնդրի շրջ. (քաղ.) ֆինբաժնից այդ գումարների հետագա ձևակերպման ցուցմունքներ։

11. Գյուղբյուջեյի և ինքնահարկման ընթացիկ հաշիվներում լցված գումարների համար խնայդրամարկղը վճարում է 6% տարեկան։ Գյուղխորհրդի տրամադրության տակ մուծվող զանազան գումարների հաշվով տոկոսներ չեն վճարվում։

### Գյուղխորհրդի ընթացիկ հաշիվների գումարների կարգադրման իրավունքը

12. Գյուղխորհրդի ընթացիկ հաշիվներում լցված գումարների կարգադրությունն անում է միմիայն գյուղխորհրդի նախագահը, կամ նրան փոխարինող անձը։

Գյուղխորհրդի վճարման բոլոր կարգադրությունները (չեկերը, օրդերները, գումարների վերադարձման վորոշումները), վորպես կարգ անպայման պետք է ունենան յերկու ստորագրություն՝ գյուղխորհրդի նախագահի և հաշվետարի, իսկ հաշվետար չունենալու կամ բացակայելու դեպքերում՝ քարտուղարի։

Հաշվետարի և քարտուղարի բացակայության դեպքում, վճարման փաստաթղթերը կարող են ունենալ նաև մի ստորագրություն—նախագահի, կամ նրան փոխարինողի ստորագրությունը։



Բոլոր դրամական կարգադրությունները պետք է անպայման կնքված լինեն գյուղխորհրդի կնիքով։

13. Գյուղխորհուրդը պարտավոր է ուղարկել խնայդրամարկղին փաստաթղթերը հաստատող անձնավորությունների ստորագրությունների և կնիքի նմուշները։

Հավասար կերպով փաստաթղթերն ստորագրելու իրավունք ունեցող անձնավորությունները փոխվելու կամ այլ պատճառներով նրանցից վորևե մեկի բացակայելու դեպքերում, գյուղխորհուրդն այդ մասին անմիջապես պետք է հայտնի խնայդրամարկղին, միաժամանակ ուղարկելով այն անձի ստորագրության նմուշը, վորը փոխարինելու յե նախկինին։ Պատշաճ դեպքերում գյուղխորհուրդը հայտնում է խնայդրամարկղին այն ժամկետը, վորի ընթացքում կարգադրություններն ունենալու յեն մեկ ստորագրություն—նախագահի, կամ նրան փոխարինողի։

14. Բացի գյուղխորհրդի կարգադրություններից, գյուղխորհրդի ընթացիկ հաշվից գումարների դուրս գրելը կարող է կատարվել նաև շրջգործկոմի (քաղխորհրդի) վորոշումների հիման վրա, այն դեպքերում, յերբ գյուղխորհուրդն իր հաշիվներով սխալ, կամ դիտավորյալ ձևակերպել է գյուղբյուջեյին չպատկանող գումարներ, վորոնք պատկանում եյին վերադաս շրջ. և պետ. բյուջեյին կամ յեթե գյուղխորհուրդը վորոշված կարգով և ժամկետներին չի մասհանում շրջանային կարգավորման ֆոնդին պատկանող գումարները, կամ չի փոխադրում շրջբյուջեյին հասանելիք միջշրջանային նշանակություն ունեցող ձեռնարկումների համար նախատեսված ինքնահարկման գումարները։

*Շրջգործկոմի այս վորոշումները խնայդրամարկղը կատարում ե շրջ. (քաղ.) ֆինբաժինների պահանջների հիման վրա։*

*Այդ պահանջագրի մեջ շրջֆինբաժինը պարտավոր ե նշել՝*

*ա. պահանջի հիմքը, վորի հիման վրա կազմված ե պահանջը—շրջգործկոմի (քաղխորհրդի) վորոշման համարը, ամիս, ամսաթիվը.*

*բ. պահանջվող գումարը (տառերով) և դուրս գրելու ժամկետները։*

*գ. այն խնայդրամարկղի անունը, վորտեղ պահվում են տվյալ գյուղխորհրդի միջոցները։*

*Պահանջագիրը կազմվում ե յուրաքանչյուր գ. խ. նկատմամբ առանձին-առանձին և մի պատճենի հետ միասին ուղարկվում ե շրջ. (քաղ.) խնայդրամարկղին, վորն անմիջապես ուղարկում ե համապատասխան խնայդրամարկղին կատարելու համար։*

*15. Լրիվ, կամ մասնակի կերպով գյուղխորհրդի պահանջագրերը չբավարարելու մասին, շրջ. (քաղ.) խորհրդի վորոշումները տվյալ գյուղբյուջեն սպասարկող խնայդրամարկղը կատարում ե շրջ. (քաղ.) ֆինբաժինների պահանջների հիման վրա։ Այդ պահանջները, վորի մեջ ֆինբաժիններն անպայման պետք ե մատնանշեն շրջգործկոմի (քաղխորհրդի) վորոշումների համարը, ամիս և ամսաթիվը, գ. խ. պահանջները չկատարելու ժամկետը և խնայդրամարկղի անունը, վորտեղ պահվում են գ. խ. միջոցները, ուղարկվում են շրջ. (քաղ.) խնայդրամարկղին, վորն անմիջապես ուղարկում ե համապատասխան խնայդրամարկղին կատարելու։*



## II. ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ԼՐԻՎ ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

### խնայդրամարկղների հանձնարարված գործառնություններ

*16. Գյուղխորհրդի լրիվ դրամարկղային սպասարկում կատարող խնայդրամարկղը՝*

*ա) ընդունում ե գյուղբյուջեյին պատկանող յեկամուտները, ինքնահարկման գումարները, և գյուղխորհրդի իրավասության տակ մուծվող բոլոր գումարները.*

*բ) ընդունում ե սպասարկվող գյուղխորհրդի տերիտորիայում ապրող առանձին հարկատուներից պետական և վերադաս տեղական բյուջեյի յեկամուտները, ինչպես նաև պետապահովագրության գումարները.*

*գ) կատարում ե վերադաս տեղական և պետական բյուջեների յեկամուտներից—գյուղբյուջեյի ոգտին սահմանված մասհանումները.*

*դ) ընդունում ե գյուղխորհրդի նախագահից—գյուղխորհուրդ մուծած (անմիջապես նախագահին, կամ լիազորի միջոցով) մասսայական փոխառությունների իրացումից գոյացած գումարները, ըստ վորում, գյուղխորհուրդը և խնայդրամարկղը ղեկավարվում են Միութենական ֆինժողկոմատի փոխառության իրացման վերաբերյալ հրապարակած հատուկ հրահանգով.*

*ե) փոխադրում ե շրջխնայդրամարկղի միջոցով շրջանային պետբանկի բաժանմունքին այն գումարները, վորոնք յենթակա յեն ձևակերպելու վերադաս տեղական և պետական բյուջեների հաշիվներով, ինչպես նաև փոխադրում ե պետապահովագրական գումարները.*

*զ) կատարում ե գյուղխորհրդի ընթացիկ հաշիվներից վճարումներ.*

է) պահում է գյուղխորհրդին պատկանող փոխառությունների պարտատոմսերը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գյուղբյուջեների յեկամուտների և ծախքերի մանրամասն հաշվառումը՝, հաշվետվությունը, ինչպես նաև անձնական հաշիվների վարումը մտնում է գ. խ. պարտականությունների մեջ։ Խնայդրամարկղներին այդ աշխատանքներին մասնակից անելն արգելվում է։

17. Գյուղխորհրդի լրիվ սպասարկման ժամանակ յուրաքանչյուր խնայդրամարկղ ստանում է շրջ. (քաղ.) ֆինբաժիններից շրջխնայդրամարկղի միջոցով հետևյալ տեղեկությունները՝

ա) սպասարկվող գյուղբյուջեյին պատկանող բոլոր յեկամուտների ցուցակը.

բ) վերադաս տեղական և պետական բյուջեներին պատկանող յեկամուտների և այլ գումարների ցուցակը, վորի մեջ պետք է մատնանշված լինի՝ թե վոր յեկամուտներից կամ գումարներից, վոր մասը կամ տոկոսը, խնայդրամարկղը պարտավոր է գրանցել գյուղխորհրդի ընթացիկ հաշվում։

Այն յեկամուտները, վորոնք շրջ. (քաղ.) ֆինբաժինների ցուցակում մատնանշված չեն, խնայդրամարկղը չի ընդունում։

Վերը հիշված ցուցակների մեջ վորևե փոփոխություն տեղի ունենալու դեպքում, շրջ. (քաղ.) ֆինբաժինը պարտավոր է ժամանակին հայտնել խնայդրամարկղին շրջխնայդրամարկղի միջոցով։

## Ա. ԳՈՒՄԱՐՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԳՈՐԾԱՌՔՆԵՐԸ

### Ում կողմից է դրամները մուծվում խնայդրամարկղ

18. Գյուղխորհրդի ընթացիկ հաշիվներով, ինչպես նաև պետբանկի շրջ. բաժանմունքին փոխադրվելիք գումարները, խնայդրամարկղն ընդունում է՝

ա. անմիջականորեն վճարողներից.

բ. գյուղխորհրդի լիազորներից.

գ. պաշտոնական անձնավորություններից և զանազան հիմնարկ-ձեռնարկություններից.

դ. կապի հիմնարկների միջոցով.

ե. պետբանկի հիմնարկների միջոցով—գյուղխորհրդի ընթացիկ հաշվին գրանցելու համար։



## Բ. ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՐԿ-ՁԵՌՆԱՐԿՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

### Ինչ փաստաթղթերով են ընդունվում գումարները

19. Գումարների ընդունելությունը խնայդրամարկղը կատարում է՝

ա. վճարողների կողմից ներկայացրած վճարման ծանուցագրերով, հարկաթերթերով և այլ վճարահատուցման թերթիկներով, անհրաժեշտ դեպքերում կցելով դրանց նախկին մուծումը հաստատող անդորրագիրը.

բ. ծանուցագրերի հիման, կամ

գ. մուծողի բանավոր հայտարարության հիման վրա։

### Վճարման հայտարարություններ

20. Վճարման հայտարարություններն անպայման կազմվում են մի օրինակից՝ մուծվելիք գումարների յուրաքանչյուր տեսակի համար անպայման առանձին և հարկատուի կամ մուծողի կողմից (նրանց անգրագիտության դեպքում խնայդրամարկղի վերստուգչի կողմից) հետևյալ դեպքերում։

ա) հարկերի, տուրքերի և այլ մուծումների վճա-

րելու ժամանակ, վորոնք յենթակա յեն լրիվ, կամ մասնակի չափով շրջպետբանկի բաժանմունքը փոխադրելու.

Մասսայական վճարումներ ընդունելիս՝ ինչպես գյուղհարկի, կուլտ-հարկի, ապահովագրական գումարների, ջրային տուրքն ընդունելու ժամանակ, վճարման հայտարարություններ չեն գրվում.

բ) կոլխոզների կողմից բոլոր տեսակի հարկերի, տուրքերի, ինչպես նաև պետական գումարները վճարելու ժամանակ։

գ) գյուղխորհրդի ընթացիկ հաշվից ստացած գումարների մնացորդը հետ մուծելիս.

և դ) գյուղխորհրդի տրամադրության տակ այլ գումարների ընթացիկ հաշվին մուծվող գումարներն ընդունելիս։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ապառքատիրոջ գույքը վաճառելուց գոյացած գումարը ներկայացնելիս մուծողը ներկայացնում է խնայդրամարկղին գյուղխորհրդի տեղեկանքն այն մասին, թե ներկայացրած գումարը վոր հարկի կամ տուրքի դիմաց և վորքան պետք է ձևակերպվի և առանձին այն գումարը, վորն ընդունվելու յե ի հատուցումն աճուրդի հետևանքով կատարված ծախսերի։

21. Վճարման հայտարարության մեջ (հավելված № 1) անպայման պետք է մատնանշված լինի։

ա) վոր խնայդրամարկղն է մուծվում գումարը.

բ) ընդհանուր գումարի չափը գրավոր.

գ) վոր հարկի, տուրքի կամ ինչի դիմաց է մուծվում գումարը.

դ) վճարողների (և վոչ մուծողի) ազգանունը, անունը և հայրանունը, կամ հիմնարկ-ձեռնարկի անունը. յեթե մուծողը իրավական անձ է, ապա և նրա հասցեն։



### Վճարումների հաշվարկման կարգը

22. Վճարման հայտարարություններով, հարկային թերթով և նրանց կցված անդորրագրերով գումարներ ընդունելիս, խնայդրամարկղի վերստուգիչը, ներկայացրած վերը հիշված փաստաթղթերի տվյալների հիման վրա, կազմում է վճարումների հաշվարկումը (расчет платежа)։ Ընդունված գումարը մուծվում է պարտադիր հետևողականությամբ ի մարումն՝

ա) նախորդ տարիներից մնացած ապառքի և նրա վրա կատարված տույժի.

բ) տուգանքի, յեթե մարված չի յեղել.

գ) հերթական վճարումի (գրույքի) ըստ ժամկետների և նրա տույժի, յեթե մուծվում է սահմանված ժամկետից հետո։

Տույժը հաշվարկվում է հարկաթերթում նշված ժամկետից մինչև խնայդրամարկղ մուծելու օրը, յուրաքանչյուր անցած օրվա համար, ըստ վորում մուծելու օրը հաշվի չի առնվում։

Տույժը բարդվում է հետևյալ չափերով՝

ա) հանրայնացված սեկտորի ձեռնարկություններից և կազմակերպություններից, (նույն թվում կոլխոզները)—0,1 %.

բ) կուլակային տնտեսություններից և յեկամտային հարկի № 3 ցանկով հարկադրված անձերից (վոչ աշխատավորական յեկամուտներով ապրողներից)—1,0 տոկոս.

և գ) մնացած հարկատուներից—0,2 %։

Տույժը հաշվելիս ապառքի կամ ժամկետանց գրույքի գումարի 50 և ավելի կոպեկներն ընդունվում են որպես լրիվ ռուբլի, 50-ից պակաս կոպեկները հաշվի չեն առնվում։ Յեթե տույժը հաշվելիս ստացվում է նաև վոչ լրիվ կոպեկ, այդպիսին կլորացվում է և գանձվում լրիվ կոպեկի չափով։

Տույժի հաշվարկման աղյուսակը բերված է № 2 հավելվածում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—1. Յեթե ընթացիկ տարվա յենթակա գումարը հետաձգված է, կամ անցյալ տարիների ապառքը վճարվում է վոչ լրիվ գումարով, ապա տույժը հաշվվում է այն գումարից, վորը մուծվում է։ Որինակ, յեթե ապառքը 50 ռուբլի յե, բայց մուծվում է 30 ռուբլի, տույժը գանձվում է 30 ռուբլուց։

2. Հարկաթերթում «ապառք նախորդ տարիների» սյունակում նշված կոպարային ապահովագրման գումարից տույժ չի գանձվում։

## Անդորրագրեր կազմելը

23. Հաշվարկումը կատարելուց հետո, վերստուգիչն իր ստորագրությամբ կազմում է վճարողի անունով սահմանված ձևի անդորրագիր (հավելված № 3)։

Անդորրագրում, վոր գրվում է արմատի հետ միասին պատճենահան թղթի միջոցով, ցույց է տրվում՝

ա) շրջանի անունը, բ) գյուղխորհրդի և գյուղի անունը, գ) վճարողի կատեգորիան, դ) մուծված գումարի անունը, ե) մուծելու ամիսը, ամսաթիվը, զ) վճարողի ազգանունը, անունը և հայրանունը և է) վերստուգիչի կազմած հաշվարկումը։



Յուրաքանչյուր վճարումի համար կազմվում է առանձին անդորրագիր։

Գանձապահի հետագա աշխատանքները թեթևացնելու նպատակով, խնայդրամարկղի վերստուգիչը անդորրագրի ձախ անկյունում կատարում է նշանակումներ։

ա) «ցուցակ», վորը նշանակում է, թե պետք է գրանցել մասսայական վճարումների հաշվառման ցուցակում (հոդ. 31).

և բ) կրճատ նշանակում թե վոր ընթացիկ հաշվում պետք է գրանցել («հաշ. Գ. Բ.», «հաշ. ինքնահ.», հաշ գանձապան») յեթե ընդունված գումարը լրիվ գրանցվե ու յե գյուղխորհրդի վերը հիշված ընթացիկ հաշիվներից մեկն ու մեկում և գրանցվելու յե մուտքի գործառքների ռեեստրի մեջ (հոդ. 32).—

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. - Անդորրագրում վոչ մի ուղղում, ջնջում չի թույլատրվում։ Սխալ կազմած անդորրագիրը համարվում է փչացած. խաչաձև ջնջվում է և վրան վերստուգչի ստորագրությամբ մակագրվում է «փչացած»—ու թողնվում գրքույկի մեջ, (առանց կտրելու նրանից)։

24. Անդորրագրերի գրքույկները պատրաստվում են՝ ա) մասսայական վճարումների յուրաքանչյուր տեսակի համար առանձին (առանձին—գյուղհարկի, կուլտ-տուրքի, [illegible], ջրային տուրքի և ինքնահարկման գումարների),

բ) գյուղխորհրդի ընթացիկ հաշիվներում մուծվելիք գումարների համար առանձնացվում է ընդհանուր գրքույկ բոլոր ընթացիկ հաշիվների համար։

գ) այն մուծումների համար, վորոնք յենթակա յեն

լրիվ, կամ մասնակի չափով պետբանկի շրջաժանմունքին փոխադրելու, առանձնացվում է նույնպես մի ընդհանուր գրքույկ՝ բոլոր տեսակի մուծումների համար։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ,—Համարակալած անդորրագրերի գրքույկները խնայդրամարկղներին ուղարկում է շրջ. (քաղ.)ֆին բաժինը, շրջխնայդրամարկղի միջոցով։

Խնայդրամարկղներում անդորրագրերի գրքույկները յենթակա յեն հաշվառման, ինչպես խիստ հաշվառման յենթակա բոլոր բլանկները։

### Մուծումները վճարման փաստաթղթերի մեջ նշանակելու մասին

25. Անդորրագրի համարը, ամիս-ամսաթիվը և ընդունված գումարի չափը խնայդրամարկղի վերստուգիչը նշանակում է վճարման փաստաթղթերի վրա, դրա համար առանձնացրած մասում (հավելված № 4).

Յեթե մուծումն այնպիսի գումարներից է, վորի համար պարտադիր է վճարման հայտարարություն ներկայացնելը (հոդ. 20), խնայդրամարկղի վերստուգիչը հայտարարությունում նշանակում է հաշվարկման մանրամասնությունը և հաստատում է իր ստորագրությամբ։

### Գումարների ընդունելությունն առանց վճարման ծանուցագրի (հարկաթերթերի) յեվ մուծողի բանավոր հայտարարության հիման վրա

26. Առանց վճարման փաստաթղթի գումարներ մուծելու դեպքում, (յերբ մուծողը չի ներկայացնում վճարման փաստաթուղթ կամ հարկաթերթ) և յերբ դրամն ընդունվում է մուծողի բանավոր հայտարարության հիման վրա—խնայդրամարկղի վերահսկիչը հոդ. 23-րդում նախատեսնված կարգով անդորրագիրը կազմում է ընդհանուր գումարի համար, առանց բաժանելու նրան ապառքի, տույժի, տուգանքի, պահանջելով հոդ. 20-ով նախատեսնված դեպքերում կազմելու վճարման հայտարարություն։



### Գումարների ընդունելությունը լիազորված անձնավորությունների միջոցով

27. Լիազորված անձի միջոցով կոլեկտիվ կերպով դրամներ մուծելիս, յեթե մուծումների համար սահմանված են հարկաթերթեր կամ ծանուցագրեր, լիազորը ներկայացնում է խնայդրամարկղին վճարողների հարկաթերթերը կամ ծանուցագրերը։ Վերստուգիչը հաշվարկումը և դրամի ընդունելությունը նույնպես կատարում է յուրաքանչյուրի համար առանձին (հոդ. 22), կազմում է առանձին անդորրագրեր և կատարում է նշանակումներ փաստաթղթերի վրա։

### Գումարների ընդունելություն գյուղ-լիազորների միջոցով

28. Գյուղ-լիազորների միջոցով դրամներ ընդունելիս, խնայդրամարկղի վերահսկիչը անդորրագրերի գրքույկի արմատների ավյալների հիման վրա հաշվում է յուրաքանչյուր հարկի գումարը և բոլոր հարկերի ընդհանուր գումարը և ստուգում է լիազորի հետ հաշվարկման ճշտությունը, ապա յուրաքանչյուր հարկի ընդհանուր գումարի համար դուրս է գրում գյուղլիազորի անունով սահմանված ձևի անդորրագրեր (հոդ. 23 և 24), իսկ անհրաժեշտ դեպքերում վերստուգիչը կազմում է նաև վճարման հայտարարությունը (հոդ. 20)։

Միաժամանակ անդորրագրերի արմատների վրա նշանակում է հոդ. 23-ով նախատեսնված գանձապահի համար անհրաժեշտ նշանակումները։

Գյուղլիազորի կողմից տրված անդորրագրերի վեր-

ջին արմատի վրա վերստուգիչը նշանակում է ընդունված ընդհանուր գումարի չափը, անդորրագրերի № №-ը, վորոնցով ընդունված է գումարը (որինակ՝ 14150—14180 անդորրագրերով գանձված հարյուր քսան մեկ ռուբլի 50 կոպ. ընդունեցի վերստուգիչ Հակոբյան և հաստատում է իր ստորագրությամբ)։

Գյուղխորհրդների համար անդորրագրային գրքույկները տրվում են խնայդրամարկղից, գյուղխորհրդի պահանջագրերով՝ ստորագրված և կնիքով հաստատված։

Անդորրագրերի գրքույկներն ստանալուց հետո, նրանց ճիշտ օգտագործման և պահպանման համար պատասխանատու յեն գյուղխորհուրդը և նրա լիազորները։

## Խնայդրամարկղում ունեցած ավանդի հաշվին մուծումների ընդունելության կարգը

29. Ավանդատուի հաշվից գումարներ դուրս գրելը և նրա վճարումների դիմաց ձևակերպելը թույլ է տրվում միայն տվյալ խնայդրամարկղում ունեցած ավանդներից և անպայման ավանդատուի կարգադրությամբ։

Այդ գործառքը խնայդրամարկղը ձևակերպում է վորպես ավանդից դուրս գրված կանխիկ յելք և կանխիկ մուտք ընդունված վճարումների դիմաց։

Ավանդից պարտադիր կերպով գումար դուրս գրելը և հարկերի ու տուրքերի դիմաց ձևակերպելը կատեգորիկ կերպով արգելվում է։

Խնայդրամարկղի այն աշխատակիցները կամ այն անձնավորությունները, վորոնք կկարգադրեն կամ կթույլատրեն ավանդատուի հաշվից դուրս գրել վոր-



վե գումար առանց ավանդատուի գիտության և համաձայնության—յենթարկվում են քրեական պատասխանատվության։

## Գանձապահի պարտականությունները

30. Վերստուգչից ներքին կարգով ստանալով մուծումների փաստաթղթերը, գանձապահը՝

ա) մուծողից ընդունում է գումարը համապատասխան վերստուգչի կողմից կազմած անդորրագրի·

բ) համաձայն վերստուգչի կողմից անդորրագրերի վրա արած նշանակումների, ընդունած գումարը գրանցում է համապատասխան ցուցակում (հոդ. 31), կամ րեեստրում, յեթե գումարն ընդունվում է գ. խ. ընթացիկ հաշվին (հոդ. 32).

գ) ստորագրում է անդորրագրերը և գործառքի հետ կապված մյուս փաստաթղթերը (հարկաթերթիկի վրա կատարած հաշվարկը, անդորրագրի վերջին արմատի վրա գրված տեղեկանքը, հանձնված գյուղխագորին, ավանդային փաստաթղթերը և այլն).

դ) հանձնում է դրամը մուծողին հարկաթերթիկը կամ վճարման ծանուցագիրը, դրամն ընդունելու անդորրագիրը, վորը հաստատում է խնայդրամարկղի կնիքով (կնիքը դրվում է անդորրագրի հակառակ յերեսին) և ավանդային փաստաթուղթը, յեթե մուծումը կատարվել է հարկատուի ավանդի հաշվից և

ե) մինչև գործարքային որվա վերջը պահում է իր մոտ վճարման հայտարարությունները։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Շրջկենտրոնի բաժանմունքին փոխադրվելիք լրիվ կամ մասնակի գումարները (բացի մասսայական վճարումներից) ցուցակում կամ րեեստրում չեն գրանցվում։

## Մասսայական վճարումների ցուցակները լրացնելու կարգը

31. Ցուցակները (перечни) կազմվում են յուրաքանչյուր մասսայական վճարումի տեսակի համար առանձին (գյուղհարկ, պետապահովագրական գումարներ, կուլտ-տուրք, ջրային տուրք, ինքնահարկում) գյուղմիասհարկի կանոնադրությամբ սահմանված ցուցակի ձևով (տես հավելում № 5)։

Ցուցակի վերնագրում ցույց է տրվում խնայդրամարկղի համարը, վճարումի անվանումը (գյուղհարկ, կուլտ-տուրք և այլն), և գրանցման ժամանակը (ամիս, ամսաթիվ և տարի)։

Յուրաքանչյուր վճարողի (առանձին անձնավորության, կազմակերպության, կոլտնտեսության) համար ցուցակում հատկացվում է առանձին տող, նույնիսկ յեթե մուծումը կատարվում է կոլեկտիվ մի խումբ հարկատուներից լիազոր անձնավորության կամ գյուղլիազորի միջոցով։

Գումարն ընդունելիս գանձապահը լրացնում է ցուցակի համապատասխան սյունակները՝ անդորրագրի համարը, վճարողի ազգանունը և անվան ու հայրանվան սկզբի տառերը և մուծած ընդհանուր գումարը (սյունակներ «ընդամենն» ցուցակի և անդորրագրի)։

Գյուղլիազորից գումարներ ընդունելիս՝ խնայդրամարկղի գանձապահը ցուցակի առաջին ազատ տողի վրա գրում է «ընդունված գյուղլիազոր այսինչից» (անուն, հայրանուն և ազգանուն), համապատասխան սյունակում նշանակում է վերստուգչի կողմից լրացված անդորրագրի համարը։ Ապա գանձապահը ցուցակում լրացնում է բոլոր սյունակները յուրաքան-



չյուր վճարողի նկատմամբ առանձին։ Անհրաժեշտ տեղեկությունները գանձապահը վերցնում է գյուղլիազորի կողմից ներկայացրած անդորրագրերի արմատներից, բացակայող անհրաժեշտ տեղեկությունները գանձապահը լրացնում է լիազորի բանավոր հայտարարությունից։ Ցուցակի «ընդամենն» սյունակի բոլոր վճարողների մուծած ընդհանուր գումարը պետք է համարվի վերստուգչի կողմից գյուղլիազորի անունով կազմած անդորրագրի գումարին։

Ցուցակները կազմվում են մեկ օրինակից. նրա մեջ գրանցումները կատարվում են վերստուգչի կողմից կազմած անդորրագրերի համարների հերթականությամբ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ցուցակի բլանկները խնայդրամարկղները ստանում են (քաղ.) ֆինբաժիններից շրջ. (քաղ.) խնայդրամարկղի միջոցով։

## Գյուղխորհրդի ընթացիկ հաշիվներով մուտքի գործառու-ները ռեեստրի մեջ գրանցելու կարգը

32. Գյուղխորհրդի ընթացիկ հաշիվներում մուտք յեղած գումարները, մուտքի ռեեստրում (հավելված № 6) գանձապահը գրանցում է միայն գյուղխորհրդին լրիվ պատկանող գումարները։

Գյուղխորհրդի ընթացիկ հաշվի համապատասխան սյունակում, յուրաքանչյուր մուծումը (անդորրագիր) գրանցվում է առանձին, ցույց տալով մուծողի անունը, ինչի համար է մուծված և ընդհանուր գումարը։

Գրանցման հերթական համարը նշանակում է փաստաթղթի վրա, յեթե այդպիսին մնում է գանձապահի մոտ։

## 2. ԿԱՊԻ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

33. Գյուղխորհուրդը պարտավոր է իրեն սպասարկող խնայդրամարկղին տալ մշտական լիազորագիր՝ փոստով գյուղխորհրդի անունով փոխադրված գումարները ստանալու համար.

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այն գյուղխորհուրդներին, վորոնց դրամարկղային լրիվ սպասարկումը հանձնված է խնայդրամարկղին, փոստից դրամական փոխադրումներն անմիջականորեն ստանալն արգելված է։

34. Խնայդրամարկղի գանձապահն ստանալով կապի հիմնարկներից (փոստից) գյուղխորհրդին փոխադրած փոխադրումների կտրոնները, կամ փոխադրական հեռագրերը, յեթե գումարը փոխադրված է հեռագրով, հանձնում է վերստուգչին, վորն անհրաժեշտ դեպքերում նշանակումներ է անում նրանց վրա (ինչպես անդորրագրերի, տես հոդ. 23) թե վոր ցուցակում կամ ռեեստրում պետք է գրանցել և վերադարձնում է գանձապահին։

Յեթե այդ փաստաթղթերով ստացած գումարը չի ձևակերպվում այս կամ այն ցուցակում կամ ռեեստրում, ապա գանձապահը նշանակումներ է անում առանձին թերթիկի վրա ստացված գումարները, գործարքային օրվա վերջում հաշվի առնելու համար և ապա այդ փաստաթղթերը նորից վերադարձնում է վերահսկիչին։

Փոխադրված գումարները հաշվարկվում են ընդհանուր գումարով վճարման դիմաց, առանց բաժանելու ըստ տեսակների (ապառք, տույժ, տուգանք և դրույք)։

Այդ գումարների համար խնայդրամարկղն անդորրագիր չի կազմում։

## 3. ՊԵՏԲԱՆԿԻ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՄՏԱՑԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ

35. Պետբանկի հիմնարկներից գյուղխորհրդի տրամադրության տակ փոխադրած գումարները գրանցվում են գյուղխորհրդի ընթացիկ հաշվին, համաձայն պետբանկի հանձնարարության, վորի մեջ ճշտորեն պետք է նշանակված լինի փոխանցված գումարի նպատակը։ Բանկի հանձնարարության մեջ պարզ և անհրաժեշտ տվյալներ չլինելու դեպքում, խնայդրամարկղն այդ գումարը ձևակերպում է գյուղխորհրդի զանազան գումարների ընթացիկ հաշվով և շրջ. (քաղ.) խնայդրամարկղի միջոցով պահանջում է պետբանկի հիմնարկից անհրաժեշտ լրացուցիչ տեղեկությունները։

36. Պետբանկի հանձնարարական նամակով փոխադրած գումարը խնայդրամարկղը ձևակերպում է իր գործառքային օրադրի մեջ վորպես կանխիկ յելք ի հաշիվ պետբանկի և վորպես կանխիկ մուտք գյուղխորհրդի ընթացիկ հաշվում գրանցելով (որվա գործողությունը վերջացնելիս կազմվում է գ. խ. ընթացիկ հաշիվների համար համապատասխան օրդերներ)։

Պետբանկի հանձնարարական նամակով ստացված գումարի համար վերստուգիչն անմիջապես կազմում է ծախսային օրդեր ձև № 54 և այդ գումարը գրանցում է խնայդրամարկղի գործառքային օրադրում «այլք» կոլոնկայի «ծախք կանխիկ դրամով» սյունա-

կում, իսկ բանկի հանձնարարական նամակի վրա նշանակելով կրճատ բովանդակությունն այն մասին, թե գյուղխորհրդի վոր ընթացիկ հաշվով ինչ գումար պետք է ձևակերպել, հանձնում է գանձապահին։

Գանձապահը բանկի հանձնարարական նամակում հիշված յուրաքանչյուր առանձին գումարը գրանցում գ. խ. ընթացիկ հաշիվների մասին ռեեստրի մեջ, նշանակում է հանձնարարական նամակի համարը, ամսաթիվը և գումարների կրճատ նպատակը և գրանցում է այդ ռեեստրի այն ընթացիկ հաշվի սյունակում, վորը ցույց է տրված վերահսկիչի կողմից։ Այդ գրանցումները կատարելուց հետո նամակը վերադարձնում է վերահսկիչին։

Այսպիսի գումարների համար անդորրագրեր չի կազմվում։

### Բ. ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎՆԵՐԻՑ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Փաստաթղթեր—վորոնց հիման վրա դուրս են գրվում գումարներ գյուղխորհրդի ընթացիկ հաշիվներից

37. Գյուղխորհրդի ընթացիկ հաշիվներից գումարները վճարվում են հետևյալ փաստաթղթերի հիման վրա՝

ա) գյուղխորհրդի չեկերով.

բ) գյուղխորհրդի կողմից կազմված ավանդային յելքի ձև 51 օրդերներով, վորոնք որվա վերջում փոխանակվում են գյուղխորհրդի մի ընդհանուր չեկով՝ յուրաքանչյուր ընթացիկ հաշվի նկատմամբ.

գ) գյուղխորհրդի վորոշումների հիման վրա, ավել կամ սխալ գանձված գումարները վերադարձնելու մասին.



դ) շրջ. (քաղ.) ֆինբաժնի պահանջագրերով գյուղխորհրդի ընթացիկ հաշվից գումար հետ ստանալու դեպքերում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—1. Գյուղխորհրդի ծախքային օրդերները համարակալվում են հերթական համարներով յուրաքանչյուր որվա համար, և ուժի մեջ են միայն գրված որվա ընթացքում։

2. Գյուղխորհրդի մի ընթացիկ հաշվից մյուս հաշիվը գումարները փոխադրվում են միայն գյուղխորհրդի չեկերով։

Ընթացիկ հաշիվներից գումարներ դուրս գրելը

38. Գյուղխորհրդի ընթացիկ հաշիվներից վճարման կարգադրությունները կատարվում են որվա սկզբին տվյալ ընթացիկ հաշվում յեղած գումարի սահմանում։ Բացառիկ դեպքերում, յերբ գյուղխորհրդին անհրաժեշտ է ծախք կատարել հաշվում յեղած մնացորդից ավել, խնայդրամարկղը գյուղխորհրդի պահանջը բավարարում է նույն որվա մուծումները հաշիվներով ձևակերպելուց հետո, յեթե որվա վերջի նոր մնացորդը ծածկում է գյուղխորհրդի ծախքային պահանջը։

39. Խնայդրամարկղի այն աշխատակիցները, վորոնք գյուղխորհրդի ընթացիկ հաշիվներից գումարներ բաց կը թողնեն հաշվում յեղած մնացորդից ավելի, կը կանչվեն քրեական պատասխանատվության. հավասար չափով յենթակա յեն քրեական պատասխանատվության չեկեր բաց թողնող գյուղխորհրդի պաշտոնյաները, չունենալով ընթացիկ հաշվում համապատասխան գումար։

## Աշխատավարձի յեվ թոշակների չեկերի բավարարումը

*40. Գյուղխորհրդի բյուջեյի հաշվին վճարվելիք աշխատավարձը և թոշակները դուրս են գրվում բացառապես գյուղխորհրդի չեկերով։*

*Աշխատավարձի չեկում անպայման պետք է գըրված լինի այն հիմնարկի անունը, վորի աշխատակիցների համար դուրս է գրված աշխատավարձը։ Չեկի հետ միասին ներկայացվում է նաև ռոճկացուցակը։ Աշխատավարձի չեկը յենթակա յե վճարման միայն այն դեպքում, յերբ նրա հետ միաժամանակ գյուղխորհուրդը ներկայացնում է առանձին չեկ բոլոր պարտադիր պահումների համար (որինակ—կուլտ-տուրքի, յեկամտահարկի, փոխառության կոլեկտիվ բաժնեգրման հերթական մուծումների)։ Բացի դա, չեկին պետք է կցված լինի վճարման հայտարարությունները (հոդ. 20) յուրաքանչյուր պահումի տեսակի համար առանձին, ցույց տալով նրա մեջ մուտքի աղբյուրը և վոր հաշվով պետք է գրանցվի պահված գումարը։*

*Պարտադիր պահումների յուրաքանչյուր տեսակի համար վերստուգիչը կազմում է առանձին անդորրագիր գումարներն ընդունելու մասին (հոդ. հոդ. 23 և 24)։*

*Աշխատավարձի չեկը վճարելուց հետո, խնայդրամարկղը վերադարձնում է գյուղխորհրդին ռոճկացուցակը, վորի վրա մակագրվում է «Ներկա ռոճկացուցակով աշխատավարձը վճարելու համար, վճարված է №............ չեկը, գումարով............................ռուբլի (տառերով)», և այդ հաստատվում է վերահսկիչի և գանձապահի ստորագրություններով և խնայդրամարկղի կնիքով։*



*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Աշխատավարձի չեկերը թույլատրվում է բավարարել այն դեպքում, յերբ անցյալ ամսվա սոցապտոկոսները փոխանցված են։ Այդ գումարների փոխանցումը կատարվում է վոչ ուշ ամսի 10-ից անցյալ ամսվա աշխատավարձից հասանելիք տոկոսների նկատմամբ։ Տոկոսները վճարելու համար գյուղխորհուրդը տալիս է առանձին չեկ, կցելով մուծման հայտարարությունը (հոդ. 20)։ Սոցապին փոխանցված գումարի համար գյուղխորհրդին տրվում է անդորրագիր (հոդ. 23)։*

*41. Այն դեպքերում, յերբ գյուղխորհրդի և նրա հիմնարկների աշխատակիցների աշխատավարձը, ինչպես նաև թոշակները վճարում է ինքը խնայդրամարկղը և վոչ գյուղխորհուրդը, ներկայացված ռոճկացուցակը համարակալվում է խնայդրամարկղի կողմից հերթականորեն տարվա սկզբից, մնում է խնայդրամարկղում և վերադարձվում է գյուղխորհրդին բոլորի աշխատավարձը կամ թոշակները լրիվ վճարելուց, կամ մի ամիս անցնելուց հետո։*

*Վերջին դեպքում խնայդրամարկղը ռոճկացուցակի վրա մատնանշում է փաստորեն վճարած աշխատավարձի ընդհանուր գումարը և այն գումարը, վորը մնում է չվճարված և ուրեմն յենթակա յե վերադարձման։ Չվճարված գումարը նորից մուտք է գրվում գյուղխորհրդի ընթացիկ հաշվում։*

*Աշխատավարձը վճարվում է ռոճկացուցակի մեջ ստացողից ստորագրություն առնելով։*

*Աշխատավարձի կամ թոշակի այն գումարը, վորն առաջին որվա ընթացքում մնում է առանց վճարելու, խնայդրամարկղը մուտք է դրում հատուկ անտոկոսա-*

դեր ընթացիկ հաշվով, հետևյալ անունով «չվճարված աշխատավարձ կամ թոշակ այս ինչ գյուղխորհրդի». Հետագա վճարումները կատարվում է ռոճկացուցակով, ընդհանուր գումարը բոլոր ռոճկացուցակների նկատմամբ որպես վերջում դուրս է գրվում վերոհիշյալ ընթացիկ հաշվից, որի համար վերահսկիչը կազմում է ձև № 51 ավանդային յելքի օրդեր։

Օրդերին անպայման կցվում է յուրաքանչյուր առանձին ռոճկացուցակի հաշվին վճարած գումարի տեղեկանքը—(ռոճկացուցակի № և վճարած գումարը)։

### Ավել մուծած գումարների վերադարձը

42. Գյուղխորհրդի վերադաս տեղական և պետական բյուջեներն ավել մուծած գումարների վերադարձը կատարվում է գյուղխորհրդի կամ շրջ. (քաղ.) ֆինբաժինների որոշումների հիման վրա։ Յուրաքանչյուր խնայդրամարկղ շրջ. (քաղ.) ֆինբաժնից ստանում է այն յեկամուտների ցուցակը, որոնց հաշվից գյուղխորհուրդն իրավունք ունի վերադարձումներ կատարել։ Շրջ (քաղ.) ֆինբաժնի կողմից նման ցուցակ խնայդրամարկղին չհանձնելու դեպքում, խնայդրամարկղը վերադարձումները կատարում է միմիայն շրջ. (քաղ.) ֆինբաժնի որոշումների հիման վրա։

Գյուղխորհրդի որոշմամբ վերադարձման յենթակա գումարը վճարվում է ստացողի կողմից այդ որոշումը ներկայացնելով, որի մեջ անպայման պետք է նշված լինի այն հարկի կամ տուրքի անունը, որից կատարվում է վերադարձը և այն աղբյուրը, որի հաշվից պետք է դուրս գրվի վերադարձումը յերկու աղբյուրից (օրինակ գյուղմիասհարկը, որը սահմանված



տոկոսների չափով ընդունվում է շրջանի և գյուղի բյուջեների օգտին), վերադարձման յենթակա գումարի դեպքում որոշման մեջ պետք է պարզ նշանակված լինի՝ թե ինչ գումար է վերադարձվում յուրաքանչյուր բյուջեյի հաշվից առանձին։

Գյուղբյուջեյից կամ ինքնահարկման գումարներից վերադարձման դեպքում ստացողը պարտավոր է ներկայացնել խնայդրամարկղ գյուղխորհրդի որոշման մի օրինակը, իսկ յեթե վերադարձումը կատարվում է յերկու աղբյուրից (օրինակ՝ գյուղբյուջեյից և շրջբյուջեյից) ներկայացվում է որոշումը պատճենով (յերկու օրինակ)։

Գյուղխորհրդի որոշումները, ինչպես նաև նրանց պատճենները պետք է վավերացված լինեն գյուղխորհրդի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հաստատված գյուղխորհրդի կնիքով (հոդված 12).

Այն գումարները, որոնք վերադարձվում են գյուղխորհրդի յեկամուտներից (գյուղբյուջեյից կամ ինքնահարկումից), խնայդրամարկղը գրանցում է գյուղխորհրդի համապատասխան ընթացիկ հաշվով, իսկ վերադաս բյուջեների հաշվին կատարվող վերադարձումները դուրս են գրվում պետբանկի հաշվից, միաժամանակ կազմելով ձև № 54 ծախսային օրդեր։ Շրջ. (քաղ.) ֆինբաժնի որոշումների հիման վրա վերադարձման յենթակա գումարները խնայդրամարկղը դուրս է գրում միմիայն պետբանկի ուղղակի հանձնարարություններով։

Պետբանկի վճարումների հանձնարարությունները և նրա հաշվից դուրս գրած վերադարձման յենթակա գու-

մարները վերահսկիչը գրանցում է որագրում «կանխիկ ծախքերի» բաժնի «այլ» սյունակում։

### Շրջ. (քաղ.) ֆինբաժինների կողմից հետ դուրս գրած գումարների ձեվակերպումը

43. Շրջ. (քաղ.) ֆինբաժինների յուրաքանչյուր հետ դուրս գրած գումարի համար (հոդ. 14) վերահսկիչը կազմում է ավանդային չեքի որդեր ձև № 51՝ գյուղխորհրդի ընթացիկ հաշվից գումարը դուրս գրելու համար և ձև № 53 դրամարկղային մուտքի որդեր՝ գումարն ընդունելու և պետբանկ փոխադրելու համար, այս գումարը դուրս է գրում գյուղխորհրդի համապատասխան ընթացիկ հաշվից և որագրում ձեվակերպում է յերկու գործառք՝ մեկը գյուղխորհրդի ընթացիկ հաշվից դուրս գրած գումարի համար (սյունակ «ծախքեր կանխիկ դրամով» կալոնկա «ավանդներից») և յերկրորդը շրջ. պետբանկին այդ գումարը փոխադրելու համար (սյունակ «մուտք կանխիկ դրամով» կալոնկա «այլ»)։

Շրջ. (քաղ.) ֆինբաժնի պահանջագրերի յերկու որինակների վրա խնայդրամարկղը նշանակում է գործառքը կատարելու ամիս-ամսաթիվը և գումարը տառերով, վորից հետո պահանջագրի մի որինակը հանձնվում է գանձապահին։

### Իրավական յեվ ֆիզիկական անձանց գումարներ վճարելու կարգը

44. Հիմնարկություններին, ձեռնարկություններին և կազմակերպություններին գյուղխորհրդի կարգադրությունների հիման վրա վճարվելիք գումարները կատարվում է փոխանցման կարգով ստացողի խնայդրամարկղում ունեցած կամ նոր բացված հաշվին, կամ ստացողի ցուցմունքների համաձայն փոխադրվում է պետբանկ իր ընթացիկ հաշվին։



Կանխիկ դրամով վճարում թույլատրվում է 100 ռուբ՝ վոչ ավել։

45. Ֆիզիկական անձանց վճարումները փոխանցվում է նրանց հաշվին և գրանցումը կատարվում է միմիայն կամավոր սկզբունքի հիման վրա, յեթե ստացողը տալիս է իր համաձայնությունը. ֆիզիկական անձի համաձայնությունը չլինելու դեպքում՝ վճարումը կատարվում է կանխիկ դրամով։

46. Բոլոր գործողությունները, յերբ վճարումները փոխանցվում են ստացողի ավանդային հաշվին տվյալ խնայդրամարկղում, ձևակերպվում է վորպես գյուղխորհրդի հաշվից կանխիկ վճարված և ստացողի հաշվին կանխիկ մուծված։

Վճարումները նույն շրջանի ուրիշ խնայդրամարկղում ունեցած հաշվին փոխանցելիս, ձևակերպվում է ձև № 10 ա. փոխադրական տեղեկագրով, իսկ ուրիշ շրջանի խնայդրամարկղն այդ գործառքը կատարում է ձև № 10 փոխադրական տեղեկագրով, պահպանելով 1933 թվի մարտի 22-ի № 37-րդ շրջաբերականի ցուցմունքները։

Ստացողի կարգադրությամբ վճարումների գրանցումը նրա հաշվին շրջ. պետ. բանկում, ձևակերպվում է ինչպես պետբանկի հանձնարարություն, կանխիկ, ըստ վորում վերահսկիչը կազմում է մուտք որդեր ձև № 53 վճարած գումարի համար և գրանցում է գործառքային որագրում սյունակ «մուտք կանխիկ դրամով» կալոնկա «այլ»։

Վերահսկիչի յեվ գանձապահի պարտականությունները

*47. Խնայդրամարկղի վերահսկիչն ստանալով ծախսային փաստաթուղթը՝*

*ա) ստուգում է վորքան ճիշտ է կազմված փաստաթուղթը (չեկերը, օրդերները, գյուղխորհրդի վորոշումները, շրջ. (քաղ.) ֆինբաժնի պահանջները), ստորագրված է արդյոք համապատասխան պաշտոնյաների կողմից, կնքված և կցված են պահանջվող օրդերները (ռոճկացուցակ, մուծումների հայտարարություններ և այլն).*

*բ) այն դեպքերում, յերբ գյուղխորհուրդը ծախսերը կատարում է օրդերներով, վերահսկիչը պարտավոր է տանել ժամանակ գրանցումներ առանձին թերթիկի վրա, վորտեղ հաշվի է առնվում գյուղխորհրդի յուրաքանչյուր ընթացիկ հաշվի որվա սկզբին յեղած ազատ մնացորդները, որվա ընթացքում տեղի ունեցած մուտքն ու յելքը և դուրս է բերում յուրաքանչյուր գործառքից հետո նոր ազատ մնացորդը.*

*գ) պարզում է՝ արդյոք ավյալ ընթացիկ հաշվում կա համապատասխան մնացորդ՝ ծախսերը կատարելու համար.*

*դ) գրանցում է գյուղխորհրդի համապատասխան ընթացիկ հաշիվներով և խնայդրամարկղի գործառքային որագրում յուրաքանչյուր չեկով կատարած ծախսը, ինչպես նաև այն գումարները, վորոնք դուրս են գրվում խնայդրամարկղի օրդերներով շրջ. (քաղ.) ֆինբաժնի պահանջած գումարների նկատմամբ.*

*ե) ստորագրում է վճարման յենթակա գյուղխորհրդի ծախսային օրդերը և օրդերի համապատասխան տեղում նշանակում է ավյալ ընթացիկ հաշվի մնացորդը օրդերում նշված գումարը դուրս գալուց հետո, սակայն գյուղխորհրդի համապատասխան ընթացիկ հաշվի անձնական քարտում օրդերով դուրս գրած գումարը չի գրանցում, քանի վոր այդպիսին կատարվում է որվա վերջում մի ընդհանուր գումարով համաձայն օրդերներին փոխարինող գ. խ. չեկի.*



*զ) ձևակերպում է ավյալ ծախսի հետ կապված բոլոր փաստաթղթերը (օրինակ՝ դուրս գրած գումարը ստացողի ավանդային հաշվին մուտք գրելը, աշխատավարձից պարտադիր պահումների համար տրվող անդորրագրերի կազմելը, պետբանկի հաշվին կատարվող վերադարձումները և այլն).*

*է) հանձնում է ներքին կարգով փաստաթղթերը գանձապահին։*

*48. Ստանալով փաստաթղթերը՝ խնայդրամարկղի գանձապահը՝*

*ա) պարզում է գյուղխորհրդի ծախսային փաստաթուղթը ներկայացնողի անձնավորության իսկությունը, յեթե գյուղխորհրդի կողմից ծախսային փաստաթուղթը տրված է անվանական, ապա փաստաթղթերի վրա, առնում է ստացողի ստորագրությունը դրամն ստանալու մասին.*

*բ) ձևակերպում է գործառքների հետ կապված բոլոր փաստաթղթերը (օրինակ՝ ստորագրում է ավանդային փաստաթղթերը, աշխատավարձից պահված պարտադիր պահումների անդորրագրերը, վերադարձվելիք ռոճկացուցակի վրա մակագրելը և այլն).*

*գ) վճարում է դրամը և*

*դ) համապատասխան դեպքերում ստացողին վերադարձնում է ավանդային փաստաթղթերը, ռոճկացուցակը, պահումների անդորրագրերը և այլն)։*

## Գ. ՕՐՎԱ ԳՈՐԾԱՌՔՆԵՐԻ ՑԵՐԵԿԱՓԱԿՈՒՄ

### Մուտքի փաստաթղթերի հանրագումարումը

49. Գործառնական օրը վերջացնելուց հետո վերահսկիչը հաշվում է օրվա ընդհանուր մուտքը՝

ա) անդորրագրերի բոլոր գրքույկներով.

բ) կապի հիմնարկների փոխադրական փաստաթղթերով, և

գ) պետբանկի հանձնարարական նամակներով։

Գանձապահը պարզում է ընդհանուր մուտքը հաշվելով ա) յուրաքանչյուր ցուցակի գումարը առանձին բ) գ. խ. ընթացիկ հաշիվների մուտքի ռեեստրը, գ) վճարման հայտարարությունների և կապի հիմնարկների փոխադրական փաստաթղթերի գումարները, չգրանցված ցուցակներում և ռեեստրում։

Ստացված օրվա ընդհանուր գումարը փոխադարձաբար ստուգվում է վերահսկիչի և գանձապահի միջև, որից հետո գանձապահը բոլոր փաստաթղթերը հանձնում է վերահսկիչին։

### Մասսայական վճարումների ցուցակների ձևակերպումը

50. Համապատասխան անդորրագրքույկների արմատների տվյալների հիման վրա, վերստուգիչը լրացնում է գանձապահի կողմից չլրացրած յուրաքանչյուր ցուցակի մնացած սյունակները (հոդ. 31), ըստ որում մուտքի ընդհանուր գումարը վերահսկիչի կողմից բաժանվում է ըստ գյուղ և շրջ. բյուջեների, (պետբանկի շրջ. բաժանմունքի) շրջ. ֆինբաժնի կողմից ցույց տված տոկոսային հարաբերությամբ։

Յուրաքանչյուր ցուցակի վերջում վերահսկիչն առանձին տեղերի վրա նշանակում է՝



ա) մուտքի ընդհանուր գումարը (տառերով) ցուցակի «ընդամենը» սյունակի.

բ) գյուղխորհրդի ընթացիկ հաշվին գրանցվելիք ընդհանուր գումարը, (տառերով) և

գ) վերադաս բյուջեների հաշվին (պետբանկի շրջ. բաժան.) փոխադրվելիք ընդհանուր գումարը (տառերով)։

Այս հաշվարկումն ստորագրվում է վերահսկիչի և գանձապահի կողմից։

### Մուտք եղած գումարների բաշխումը գյուղխորհրդի և շրջկենտրոնի միջև

51. Վճարման հայտարարությունների, փոստով և հեռագրով փոխադրած գումարների փաստաթղթերի հիման վրա, որոնք ենթակա են պետբանկի շրջբաժանմունքին լրիվ կամ մասնակի հանձման (բացի մասսայական վճարումներից) վերստուգիչը հաշվում է օրվա գումարն ըստ յուրաքանչյուր մուծման տեսակի և որոշում՝

ա) շրջանային պետբանկին փոխադրվելիք գումարը և

բ) գ. խ. տրամադրության տակ մնացող ենթակա գումարը շրջ. (քաղ.) ֆինբաժնի կողմից հաստատված տոկոսների չափով յուրաքանչյուր մուծումների նկատմամբ առանձին (հոդ. 17)։

### Շրջպետբանկին փոխադրվելիք գումարների ամփոփ տեղեկագիր կազմելը

52. Մասսայական վճարումների և այլ մուծումների գումարները գյուղխորհրդի և շրջկենտրոնի միջև բաշխելու հաշվարկումը վերստուգիչը գրանցում է պետական և վերադաս տեղական բյուջեների մուտքային տախտակի մեջ (տես հավելված № 7)։

Տախտակի մեջ ցույց է տրվում՝

ա) յուրաքանչյուր մուծումի տեսակի անվանումը.

բ) տախտակին կցվելիք փաստաթղթերի քանակը.

գ) խնայդրամարկղի կողմից ոռվա ընթացքում ընդունված գումարն ըստ մուծումների տեսակների.

դ) գյուղխորհրդի ընթացիկ հաշվին մուծված գումարը և

ե) շրջպետբանկին փոխադրվելիք գումարը։

Տախտակը համարակալվում է ըստ կարգի տարվա սկզբից, կազմվում է 2 օրինակից պատճենահան թղթի միջոցով և ստորագրվում է վերահսկիչի և գանձապահի կողմից։

**Գյուղխորհրդի ընթացիկ հաշիվների մուտքի գործառքները ռեեստրի մեջ ձևակերպելու կարգը։**

53. Գանձապահի կողմից ռեեստրում գրանցած վերջին գործառքից հետո, վերստուգիչը գրանցում է ոռվա ընդհանուր մուտքի գումարն ըստ ինքնահարկման (համաձայն ցուցակի) և մասհանման տախտակից (հոդ. 52) յուրաքանչյուր մուտքի տեսակի ընդհանուր գումարները, ըստ վորում գրանցումների տեկստում մատնանշվում է մուծումների տեսակները, իսկ մասհանված գումարների ընդհանուր գումարը գրանցվում է գ. խ. համապատասխան ընթացիկ հաշվի սյունակում։

Այդ ընթացիկ հաշիվների առանձին սյունակների թիվը գումարելով, վերստուգիչը դուրս է բերում ոռվա ընդհանուր մուտքը, վորին ավելացնում է գործառքային ոռվա սկզբին յեղած ընթացիկ հաշվի ազատ մնացորդը։

Ստացած ընդհանուր գումարից դուրս է հանում տվյալ ընթացիկ հաշվից ոռվա ընթացքում կատարած ծախքը և դուրս է բերում յուրաքանչյուր ընթացիկ հաշվի ազատ մնացորդն առ հետևյալ օրը։



Ռեեստրի վերջում նշանակվում են վճարված չեկերի և օրդերների համարները, յուրաքանչյուր ընթացիկ հաշվի նկատմամբ առանձին։

**Մտից օրդերներ կազմելու կարգը**

54. Յուրաքանչյուր ընթացիկ հաշվի ոռվա մուտքի համար (ըստ ռեեստրի) վերստուգիչը կազմում է մի օրինակից մտից օրդեր ձև № 51, կցելով ամեն մի օրդերին տեղեկանք, վորում նշվում է կատարած գործառքների քանակը (ըստ ռեեստրի գրանցումների) ընթացիկ հաշիվներով և առանձին մասսայական վճարումների մուծումների գործառքների թիվը (ըստ վճարումների տեսակների յուրաքանչյուր ցուցակի գրանցումների)։ Շրջանային պետբանկի բաժանմունքին փոխադրվելիք տախտակի ընդհանուր գումարի հանդեպ վերստուգիչը դուրս է գրում մի օրինակից մտից օրդեր ձև № 53, նշելով հակառակ յերեսում կատարած գործառքների թիվը ըստ մուծումների տեսակների։

**Գյուղխորհրդի ընթացիկ հաշիվներում յեվ խնայդրամարկղի գործառնային ռրագրում կատարվելիք գրանցումները**

55. Օրդերները կազմելու հետ միաժամանակ խնայդրամարկղի վերստուգիչը գրանցում է գ. խ. համապատասխան ընթացիկ հաշիվների անձնական քարտերում ոռվա ընթացքում յեղած մուտքի ընդհանուր գումարը (ըստ օրդերի)։

Խնայդրամարկղի գործառքային օրագրում գրանցումները կատարվում են առանձին յուրաքանչյուր մտից օրդերով, ընդհանուր գումարով, ըստ վորում այն գումարները, վորոնք փոխադրվելու յեն պետբանկի բաժանմունքին, գրանցվում են «մուտք կանխիկ դրամով» սյունակում, կալոնկա «այլ», իսկ գյուղխորհրդի

ընթացիկ հաշիվներին պատկանող գումարները գրանցվում են նույն սյունակի «ըստ ավանդների» կալոնկայում։

## Գյուղխորհրդի ընթացիկ հաշիվներից գումարներ դուրս գրելու կարգը

56. Գյուղխորհրդի ծախսային օրդերներով, ինչպես նաև ըստ վորոշումների վերադարձման յենթակա դուրս գրված գումարները վերստուգիչը գրանցում է ընդհանուր գումարով գ. խ. համապատասխան ընթացիկ հաշվի անձնական քարտում և խնայդրամարկղի գործառքային օրագրում, ըստ վորում չեկերի համարները նշանակելու համար հատկացված սյունակը մնում է բաց և լրացվում է, յերբ օրդերների և վորոշումների փոխարեն գյուղխորհրդից ստացվում է մի ամփոփ չեկ։

## Փաստաթղթերի առաքումը գյուղխորհուրդներին

57. Գործառքային օրվա վերջում խնայդրամարկղը հանձնում է գյուղխորհրդին ընթ. հաշվ. մուտքի ռեեստրը, վորին կցվում է մասսայական վճարումների օրվա ցուցակները, փոստից ստացած գումարների կտրոնները, գ. խ. «զանազան գումարների» ընթացիկ հաշվին ընդունված մուծումների հայտարարությունները։

Գյուղխորհրդի ծախսային օրդերները և վերադարձների վորոշումները, վորոնցով գումարներն արդեն վճարված են, խնայդրամարկղը վերադարձնում է գյուղխորհրդին, դրանց փոխարեն ընթացիկ հաշվի մի ամփոփ չեկ ստանալուց հետո։

Այդ չեկերը գ. խ. պարտավոր է ներկայացնել նույն օրը և միայն բացառիկ դեպքերում, վոչ ուշ հետևյալ առավոտից։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գյուղխորհրդից ժամանակին այդ չեկերը չստանալու դեպքերում, խնայդրամարկղը դադարեցնում է գյուղխորհրդի ծախսային վճարումների կատարումը մինչև չեկի ստանալը, սահմանափակվելով միայն մուտքի գործառքների կատարմամբ։



## Խնայդրամարկղի հաշվետվությունը.

58. Պետական և վերադաս տեղական բյուջեներին պատկանող յեկամուտների տախտակի յերկու օրինակները (հոդ. 52) կցելով մուծումների հայտարարությունները (կետ ա և բ հոդ. 20) խնայդրամարկղն ամեն օր, իր օրական հաշվետվության հետ ուղարկում է շրջ. (քաղ.) խնայդրամարկղին։

Նույն օրական հաշվետվությանը, համապատասխան դեպքերում, կցվում են պետբանկի արդեն կատարված հանձնարարական նամակները, վորոնց հիման վրա գ. խ. ընթացիկ հաշիվներում գումարներ են մուծվել, կամ շրջ. (քաղ.) ֆինբաժնի վորոշումներով գումարներ է վերադարձված։ Հաշվետվությանը կցվում են նաև գյուղխորհրդի այն վորոշումները, վորոնց հիման վրա պետական կամ տեղական վերադաս բյուջեների յեկամուտների հաշվից գումարներ է վերադարձված (պետբանկի հաշվին կատարած վերադարձումներ)։

59. Յուրաքանչյուր ամսի 5-ից վոչ ուշ, գյուղխորհուրդը և խնայդրամարկղը պարտավոր են միմյանց հետ ստուգել գ. խ. ընթացիկ հաշիվների դրությունը և այդ հաշիվներում յեղած մնացորդների ճշտությունը հաստատում են գյուղխորհրդի ընթացիկ հաշիվների օրվա մուտքի գործառքների ռեեստրի վրա իրենց ստորագրություններով։

## Դ. ԳՅՈՒՂԲՅՈՒՋԵՅԻ ՎԱՐԿԵՐԻ ՅԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

60. Այն դեպքերում, յերբ գյուղբյուջեով պահվող հիմնարկությունների գյուղխորհուրդը վարկի

կարգադրիչի լիազորումներով միջոցներ է տրամադրում այդ հիմնարկի կողմից անմիջականորեն ծախսելու, գյուղխորհուրդը գրավոր կարգադրություն է անում խնայդրամարկղին իր ընթացիկ հաշվից համապատասխան գումար դուրս գրելու և գրանցելու տվյալ հիմնարկի ընթացիկ հաշվին։

Խնայդրամարկղն այդպիսի հիմնարկի անունով բաց է անում ընթացիկ հաշիվ, որի հաշվին մուծում է գյուղխորհրդի ընթացիկ հաշվից դուրս գրված գումարը։

61. Այդ ընթացիկ հաշիվները բացվում են, պահպանելով հետևյալ կարգը՝

ա) հիմնարկների ընթացիկ հաշիվներով խնայդրամարկղը հաշվում է 6% տարեկան՝ սակայն այդ տոկոսներից ստացված գումարը չի միացնում հիմնարկի ընթացիկ հաշվի գումարին, այլ տարվա վերջում դուրս է գրում և մուծում է գյուղխորհրդի ընթացիկ հաշիվը.

բ) հիմնարկի ընթացիկ հաշվին, բացի գյուղխորհրդի կողմից տրամադրված գումարներից, կարող են մուտք գրվել միմիայն այդ հաշվից ստացված, բայց չօգտագործված կամ ավելացած գումարները։ Ուրիշ որևէ գումարներ հիմնարկների հաշվին գրանցելն արգելվում է.

գ) գյուղխորհուրդն իրավունք ունի, ուզած ժամանակին, առանց հիմնարկի համաձայնության փակել նրա ընթացիկ հաշիվը, կամ դուրս գրել այդ հաշվից ցանկացած գումարը։

Այսպիսի դեպքերում խնայդրամարկղը կատարում է միմիայն գյուղխորհրդի գրավոր կարգադրությունները, որոնց հիման վրա հիմնարկի ընթացիկ հաշվից դուրս է գրում համապատասխան գումարը և գրանցում է գյուղբյուջեի ընթացիկ հաշվին։



62. Գյուղբյուջեյով պահվող հիմնարկների ընթացիկ հաշիվների գործողությունները խնայդրամարկղը կատարում է ինչպես իրավական անձանց հաշիվների ընդհանուր հիմունքներով, ըստ որում գյուղխորհրդի կողմից դուրս գրած գումարների և հաշվարկած տոկոսների համար կազմում է ձև № 51 ծախսային օրդեր՝ հիմնարկի ընթացիկ հաշվի համար և ձև № 51 մուտքի օրդեր՝ գյուղխորհրդի ընթացիկ հաշվի համար։

## Ե. ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՏՈՄՍԵՐԻ ՊԱՀ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

63. Խնայդրամարկղը կարող է (նայած որքան ապահովվել է նրա դրամարկղը) պահ ընդունել գյուղխորհրդին պատկանող մասսայական փոխառությունները, ինչպես նաև գյուղխորհրդում որպես գրավական ընդունված պետական փոխառությունների պարտատոմսերը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գյուղխորհրդի միջոցները պետ. փոխառության պարտատոմսերի վերածելու արգելքի կապակցությամբ, գյուղխորհրդից ուրիշ փոխառությունների պահ ընդունելը կատեգորիկ կերպով արգելվում է։

64. Գյուղխորհրդի փոխառությունների պարտատոմսերը խնայդրամարկղն ընդունում է փոխատու-պահպանման գործառքների հիմունքներով և գյուղխորհրդին տալիս է փոխատու-պահպանման վկայական։

## III. ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԱՍՆԱԿԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

65. Գյուղխորհրդի դրամարկղային մասնակի սպասարկման դեպքում, խնայդրամարկղը՝

ա) ընդունում է գյուղխորհրդի ընթացիկ հաշվին գրանցելու համար միայն գյուղխորհրդի կողմից մուծած և շրջպետբանկից ստացված գումարները և

բ) կատարում է այդ հաշիվներից ծախքեր բացառապես գ. խ. չեկերով և շրջ. (քաղ.) ֆինբաժնի կողմից գումարներ հետ դուրս գրելու պահանջագրերով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մուծողներից անմիջականորեն դրամներ ընդունելը, յեկամուտներն ըստ գյուղ և շրջկենտրոնի բյուջեների բաշխելու աշխատանքները, պետբանկին փոխադրվելիք գումարների փոխանցումը և պետբանկի հաշվին կատարվելիք գումարների վերադարձման գործողությունները—խնայդրամարկղը չի կատարում։

66. Շրջպետբանկի միջոցով գյուղխորհրդի տրամադրության տակ փոխադրված գումարների ձևակերպումը, ինչպես նաև շրջ. (քաղ.) ֆինբաժնի պահանջագրերով գ. խ. ընթացիկ հաշվից գումարներ դուրս գրելը խնայդրամարկղը կատարում է շրջ. (քաղ.) խնայդրամարկղի հանձնարարություններով։

67. Շրջ. (քաղ.) ֆինբաժինների պահանջագրերով գ. խ. ընթացիկ հաշվից գումարներ հետ դուրս գրելու գործառքները խնայդրամարկղը ձևակերպում է հոդ. 43-ով նախատեսված կարգով։

68. Գյուղխորհրդի ընթացիկ հաշիվների մուտքի գործառքների համար խնայդրամարկղը ցուցակ (պերեչեն) չի կազմում։

Շրջ. (քաղ.) խնայդրամարկղի և գյուղխորհրդի փոխադարձ համաձայնությամբ սահմանած ժամկետներին, խնայդրամարկղն ուղարկում է գյուղխորհրդին նրա ընթացիկ հաշվի անձնական քարտերից հանած քաղվածքները։



Ներկա կանոնադրությունը նախատեսնում է ֆունկցիաների և գործառքների ձևակերպման աշխատանքները խնայդրամարկղի յերկու աշխատակիցների միջև։ Խնայդրամարկղների 1-ին կարգի գործակալություններում, վորտեղ կա միայն մի հաստիքային միավոր, բոլոր գործառքների ձևակերպումը, համաձայն այս կանոնադրության, կատարում է այդ աշխատակիցը։

Խ. Ս. Հ. Մ.-ի Ցենտրոկոմատի հաշվառման և վիճակագրական սեկտորի ղեկավար՝ ՆԱԳԼԵՐ։

ՊԱԽԴ և ՊՎ.-ի Գլխ. Վարչության խնայ. և ապահովագրական գործառքների սեկտորի ղեկավար՝ ՇԱՐԻԳԻՆ։

Ավ. խորհրդատու՝ ՊԵՐՍԻԿՈՎ։

ՀԱՎԵԼՎԱԾ № 1

# ՎՃԱՐԱՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԱՅԼԱՆԼՈՒ ԳՅՈՒՂԻ № 15 ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂԻՆ.

1. Խնդրում եմ ընդունել .................... տասնըհինգ ռուբ. ............ կոպ.

2. Ի դիմաց Այլանլու գյուղում յեղած հողամասի ____________________ կապալավարձի ....................

..................................................................

(յեկամտի ճիշտ անվանումը)

Սիմոն Սիմոնի

3. Ով և ում տեղն է մուծում ....................

Աբգարյան

..................................................................

(մուծողի, կամ հարկատուի անունը, հայրանունը և ազգանունը կամ հիմնարկի անունը).

Այլանլու գյուղ Վաղպատի

4. Հարկատուի հասցեն ....................

շրջան

..................................................................

13 օգոստոսի 1933 թ.

Տնօրինություն՝ Ս. ԱԲԳԱՐՅԱՆ

Ընդունված է

13 օգոստոսի 1933 թ.

Վերահսկիչ՝ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գանձապահ՝ ՎՈՍԿԱՆՅԱՆ



ՀԱՎԵԼՎԱԾ № 2

| | | |
|---|---|---|
| Վաղ-պատի (շրջան) | բաժին | Աշխատ. մենատնտես (հարկատուի կատեգորիան) |
| Այլանլույի (գյուղխորհուրդ) | § | ՀԱՐԿԱԹԵՐԹ № 97 |
| Այլանլու (գյուղ) | հոդված | Գյուղհարկ (հարկի տեսակը) |

Անդորրագիր № 102 13 օգոստոսի 1933 թ.

Ստացված է Հովհաննիսյան Կարապետ Հակոբի

..................................................................

(հարկատուի ազգանուն, անուն և հայրանուն)

| Անցյալ տարիների ապառք | Տուգանք | Ընթացիկ տարվա կեսը | Տույժ | Ընդամենը ռ. կ. |
|---|---|---|---|---|
| 10 | — | 29—14 | 5—10 | 44—24 |

Քառասուն չորս ռուբլի 24 կոպ.

(ռուբլիները տառերով, կոպեկները թվանշաններով).

Դրամ ստացողի ստորագրությունը ՎՈՍԿԱՆՅԱՆ։ (Կընիքը դրվում է անդորրագրի հակառակ յերեսին)։

| Վաղ-պատի (շրջան) | բաժին | Աշխատ. մենատնտես (հարկատուի կատեգորիան) |
|---|---|---|
| Այլանլույի (գյուղխորհուրդ) | § | ՀԱՐԿԱԹԵՐԹ № 97 |
| Այլանլու (գյուղ) | հոդված | Գյուղհարկ (հարկի տեսակը) |

*Անդորրագրի կտրոն № 102    13 օգոստոսի 1933 թ.*

*Ստացված է Հովհաննիսյան Կարապետ Հակոբի*

*(Հարկատուի ազգանունը, անունը և հայրանունը)*

| Անցյալ տարիների պարտք | Տուգանք | Ընթացիկ տարվա հարկ | Տույժ | Ընդամենը ռ. կ. |
|---|---|---|---|---|
| 10 | — | 29—14 | 5—10 | 44—24 |

*Քառասուն չորս ռուբլի 24 կոպ.*

*(ռուբլիները տառերով, կոպեկները թվանշաններով).*

*Դրամ ստացողի ստորագրությունը ՎՈՍԿԱՆՅԱՆ։*



ՀԱՎԵԼՎԱԾ № 5

# ՑՈՒՑԱԿ (ՌԵԵՍՏՐ)

**ՄՈՒՏՔՈՒՄՆԵՐԻ ՑԵՍԱԿԸ**

Այլանլույի փոխայգրամարկղ ...

(դրամ ընդունող հիմնարկի անունը)

(գյուղխորհուրդ, պետբանկի բաժանմունք և այլն).

Գյուղհարկ ________

(ցույց տալ հարկի տեսակը).

| Անդորրագրի № № | Մուտքագրման ամսաթիվը և բնակավայրի (գյուղի) անունը | Հարկատուի ազգանունը, անունը և հայրանունը | Հարկաթերթի № № | Հարկատուի կատեգորիան (տնտեսության տեսակը) | Անցյալ տարիների պարտքը | Տուգանք | Ընթացիկ տարվա հարկը | Տույժ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| | | Փոխանցում . . | | | | | | | |
| | 13 օգոստ. | 1934 | | | | | | | |
| 102 | Այլանլու | Հակոբյան Ա. Վ. | 97 | Աշխ. մենատ. | 10 | — | 29—14 | 5—10 | 44—24 |
| 103 | » | Հովհաննիսյան Գ. Գ. | 102 | » | — | — | 15—00 | — | 15—00 |
| 104 | » | Եղոյան Ա. Վ. | 151 | Կոլտնտես. | — | — | 11—00 | — | 11—00 |
| 105 | » | Կարապետյան Ի. Հ. | 37 | Աշխ. մենատ. | — | — | 27—00 | — | 27—00 |
| 106 | » | Ղարիբյան Ռ. Ա. | 29 | Կուլակ | — | — | 290—00 | — | 290—00 |
| 107 | » | Գրիգորյան Վ. Ն. | 34 | Աշխ. մենատ. | — | — | 14—50 | — | 14—50 |

| Անդորրագրի №№ | Գյուղի անունը, վորտեղ գտնվում է հարկատուի տնտեսությունը | Հարկատուի ազգանունը, անունը և հայրանունը կամ միավորի անվանումը | Տնտեսության քարտի №№ | Վոր սեկտորին է պատկանում տնտեսությունը (կատեգորիան) | Անցյալ տարվա [illegible] | Տուգանք | Ընթացիկ տարվա հարկը | Տույժ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| | | Փոխանցում . . | | | | | | | |
| 108 | Այլանլու | Ազարյան Ա. Ռ. | 172 | Աշխ. մենատ. | — | — | 19—43 | — | 19—43 |
| 109 | » | Վոսկանյան Գ. Ի. | 12 | » | — | — | 27—60 | — | 27—60 |
| 110 | » | Վարդանյան Կ. Ի. | 14 | » | — | — | 47—00 | — | 47—00 |
| 111 | » | Այվազյան | 32 | » | — | — | 31—42 | — | 31—42 |
| 112 | » | Մարկո. Ա. Վ. | 47 | Կոլտնտես. | — | — | 11—00 | — | 11—00 |
| | | | | | 10 | — | 523—09 | 5—10 | 538—19 |

*Ընդամենը մուծված է հինգ հարյուր յերեսուն ութ ռ. 19 կոպ., վորից յենթակա յե մուծելու գ. խ. ընթացիկ հաշվին 50% կամ յերկու հարյուր վաթսուն ինը ռ. 09 կ. և փոխադրվելու յե շրջանային պետբանկին յերկու հարյուր վաթսուն ինը ռ. 10 կ.*

Վերահսկիչ՝ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գանձապահ՝ ՎՈՍԿԱՆՅԱՆ



*ՀԱՎԵԼՎԱԾ № 6*

## ՑՈՒՑԱԿ № 44 (ՌԵԵՍՏՐ)

*Այլանլույի գյուղխորհրդի ընթացիկ հաշվի մուտքերի*

*«13» օգոստոսի 1934 թ.*

| №№ ը/կ. | Հարկատուի ազգանունը, անունը և հայրանունը կամ կազմակերպության անունը | Ինչ նպատակի համար է մուծված գումարը | ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎՆԵՐ: Գյուղբյուջեի | Ինքնահարկման | Ջանադրան գումարների |
|---|---|---|---|---|---|
| | Մնացորդ որվա սկզ. | | 1211—60 | 2730—00 | 720—00 |
| 1 | Գյուղկոոպ . . . . | Շենքի վ. | 50—00 | — | — |
| 2 | Ինվալիդ. կոպերատ. | » » | 35—00 | — | — |
| 3 | Հովհաննիսյան Գ. Ս. | Ստացված է փաստերը, անհայտ է նպատակը | — | — | 10—00 |
| 4 | Գյուղմխասհարկ ըստ ցուցակի (ալբոմների) | — | 269—09 | — | — |
| | Որվա մուտքը . . | | 354—09 | — | 10—00 |
| | Ընդամ. որվա սկզբ. յեղած միաց. հետ | | 1565—69 | 2730—00 | 730—00 |
| | Ծախսված է որվա ընթացքում . . . | | 320—00 | 200—00 | — |
| | Մնում է առ հետևյալ որը . . . . . | | 1245—69 | 2530—00 | 730—00 |

*Վճարված է Գ. Բ. ընթ. հաշվից № 1, 2, 3, և 5 որդեր.*

*» » ինքնահարկման հաշվից չեկ № 670511*

Վերահսկիչ՝ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գանձապահ՝ ՎՈՍԿԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ № 7

# ՏԱԽՏԱԿ № 231

Պետական և վերադաս տեղական բյուջենների-յեկամուտների.

Ինայդրամարկղ № 15 — 13 օգոստոսի 1933 թ.

| ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ | Փաստաթղ. քանակը | Մուծված ընդհանուր գումարը | ՎՈՐԻՑ Մասհանվում ե Գ. Բ. | ՎՈՐԻՑ Փոխանցվում ե շրջ. պետբանկ | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|---|
| Գյուղմիասնարկ . . . . | — | 538—19 | 269—09 | 269—10 | |
| Ապահովագր. գումարներ | — | 458—60 | — | 458—60 | |
| Կուլտ. հարկեր . . . . | — | 20—19 | — | 20—19 | |
| Հողային ռենտա . . . . | 2 | 35— | — | 35— | |
| Ցեկամտահարկ ֆիզիկական անձերից . . . . . | 1 | 6— | — | 6— | |
| | | 1057—98 | 269—09 | 788—89 | |

Ցոթհարյուր ութսուն ութ ռուբլի 89 կոպեկ

Վերահսկիչ՝ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գանձապահ՝ ՎՈՍԿԱՆՅԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL1207381

1934 г. 300

I
6824

# ИНСТРУКЦИЯ

для сельских сберкасс по кассовому обслуживанию сельсоветов

СЕЛЬХОЗГИЗ 1934 ЭРИВАНЬ